# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1107-Ա « 27 » փետրվարի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.93 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի 12.02.2026թ. հ.Ն/8285-26 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 23.02.2026թ հ.Ն/10483 զեկուցագիրը, «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ կողմից 16.04.2018թ. տրված եզրակացությունը՝ «Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Ռաֆֆու փողոց, հ.69, հասցեում գտնվող «Երևանի հ.93 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տեխնիկական վիճակի մասին» և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի դրույթները.

1.Ժամանակավորապես դադարեցնել «Երևանի հ.93 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը՝ 2026 թվականի մարտի 9-ից՝ մինչև հիմնանորոգման աշխատանքների ավարտը:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի հ.93 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**